նոր երգեր, որոնցից հանրածանօթ են տպագրուած «Վարդը», «Ինեռ երգը», «Լուսնին», «Անչատումը»։

Գալիս է 1910 թուականը։ Կատարելագործելու կրակը գցում է նրան նոր հորիզոններ։ Նա մտիկից ծանօթանալով հայ իրականութեան երաժշտական կարիքների հետ, շտապում է օր առաջ լրացնել իր երաժշտական ուսման պակասը, որպէս զի կարողանայ աւելի լայն ծրագրով գործել հայ մասսաների մէջ։ Եւ ահա աշնանային մի առաւօտ նստում է գնացքը և ուղեւորւում դէպի Պետերբուրգ, գրպանում ունենալով միայն 16 մանէթ 60 կոպէկ։ Սկսում են մնտեսական ծանր օրերը։ Օրական ծախսում է նա միայն 4 կոպէկ։ Սակայն քաղցը, նիւթական թշուառութիւնը ո՛չ միայն նրան չեն ընկճեցնում, այլ աւելի եռանդ ու ոգևորութիւն են ներշնչում։ «Ես չեմ եղել, գրում է նա իր բարեկամուհի Նինա Ալաջալեանին, այնպէս կորովի հոգով, ինչպէս այս քաղցի ժամին»... Ցնտեսական այդ ծանր հանգամանքների մէջ նա մրցումով ընդունւում է Պետերբուրգի կոնսերվատորիան և ստանում է ուսանողական ամսաթոշակ։

ԱՐԱՄ ԵՐԵՄԵԱՆ

(Շարունակելի)

ՔԱՀԱՆԱՅԱՊԵՏԱԿԱՆ ՇՆՈՐՀ ԱՌԱՋԳԱՑԻՆ

Ուրախութեամբ լսած էինք ամիսներ առաջ Եգիպտահայ ազգայինները միոյն՝ Մ. — Ռափայելեան նախկին աշակերտ և Ուխտիս պատուական բարեկամ Մեծ. Տիար Բուզանդ Մասրաթի տրուած քահանայապետական շնորհը, որով Մեծն Գրիգորի Հրամանատար տիտղոսին ու պատիւին կը բարձրանար ի վարձ իւր ընտիր ծիրքերուն և օրինակելի գործունէութեան։ Այն պատիւը առանձին հանդէսով մը հաղորդուած էր իրեն՝ ի ներկայութեան ընտանեաց և համակիրներու՝ Գերպ. Գուզեանի կողմէ, ինչ որ ժամանակին մամուլն ալ նկարագրեց։

Այժմ զոհութեամբ կը լսենք որ Լիկեղեցւոյ Ընդ. Գլուխը իրաւամբ կը վարձատրէ Նաև Վսեմ. կարապետ Էֆ. Մաթոսեանը, որ իր անձնական ծախքով օժտեր է Եգիպտոսի Հայ Կաթողիկէները՝ նորաշէն եկեղեցիով մը—, շնորհելով նոյնպէս Մեծն. Գրիգորի Հրամանատարութեան տիտղոսն ու շքանշանը՝ կոնդակով մը հանդերձ։ Հանդէսը կատարուեր է ի Փարիզ, Օգոստ. 2ին, անոր Château Fitz James ամբանոցին մէջ ի ներկայութեան ընտանեաց և ազգային ականաւոր անձնաւորութեանց։ Արհի. Գուզեան Գերապայծառ շքանշաններն յանձնելէ առաջ կը կարդայ հետեւեալ քահանայապետական կոնդակը.

ՊԻՈՍ ԺԱ. ՔԱՀԱՆԱՅԱՊԵՏ

Մեր Սիրելի Որդւոյ, «Վրդ»-ի — Ա-ոստ-ոն-ոնդ օրհնութիւն

Աղեքսանդրիոյ Հայ կաթողիկէ Հասարակութեան եպիսկոպոս ու Մեր մեծարելի եղբայրը Յովհան Եպիսկոպոս Գուզեան, որ Հռոմ եկած էր, անձամբ ու գրաւոր աղերսագրով Մեզմէ խնդրեց որ Ասպետի ու Հրամանատարի բարձր արժանապատուութեամբ պատուենք զԹեզ, ըստ որում յոյժ երեւելի և արդիւնաւոր հանդիսացած ես Եգիպտոսի կաթողիկէ հայութեան մէջ։ Զի նորին Գերապայծառութիւնը իրագեկ կացոյց զՄեզ այն մեծամեծ ու առատաձեռն նպաստներուն՝ զոր ըրած ես թէ կարօտեալներուն և թէ եկեղեցւոյ. մասնաւորապէս այն օժանդակութեան՝ զոր ըրած ես Պէյրութի սրբանոցին և, մօտ անցեալի մէջ, Գահիրէ քաղաքին մէջ եկեղեցի մը և առաջնորդարան մը չինել տալուդ վեհանձն առատաձեռնութեամբ։ Արդ յօժար կամաք և հայրական սիրով նոյն Եպիսկոպոսին առաչնաքներուն զիշանելով, և յու զովելի արդիւնքներուդ ի վարձատրութիւն, ուզելով այնու

digitised by A.R.A.R.@

յայտնել քեզի հրապարակաւ Մեր հայրական բարձր հաճութիւնը, ներկայ կոնդակով կը կարգենք, կը հաստատենք ու կ'անուանենք զքեզ Ազգետ-Հրամանատար Սուրբ Գրիգոր Մեծին կարգեն, աշխարհական դասակարգեն, և կ'ընդունինք ու կը դասենք զքեզ նոյն Ազգետական ընտրելազոյն Լեգէոնին մէջ։ Ուստի, Սիրելի Որդեակ, հրաման կու տանք քեզ որ կարենաս ազատօրէն և զատշաճօրէն հագնիլ նոյն Ազգետներուն կարգի ու աստիճանի համազգեստն և կրել օրինաւորապէս նոյն կարգին մեծագոյն չքանչանը, որ է ութանկիւն՝ կարմրագոյն խաչ, մէջը գետեղուած Ս. Գրիգոր Մեծին պատկերն, որ մետաքսեայ ծոպաւոր կարմիր ժապաւէնով վիզէ կը կախուի։ Եւ որպէս զի ո և է անտեղութեան չհանդիպի, ըլլայ համազգեստը հագնելուն ըլլայ չքանչանը կրելու մէջ, հրաման ըրինք որ քեզի տրուի այդ կարգին յատուկ եղող տպեալ սքեմին ձեւը (Schema)։ Ցրուեցաւ Հռովմ, Ս. Պետրոսի մօտ, ձկնորսի կնքով վաւերացուած, 22 Յուլիս 1925, Մեր Գահանայապետութեան չորրորդ տարին։

Ա- Սիրելի Որդեակ Մեր
Կ-ր-գիւ Մ-ի-ս-ի-ա Գ. ԿԱՐՏԻՆԱԼ ԿԱՍՊԱՐՈՒ
Ատենադպիր

Մաթոսեան Եպ. յարգանօք կ'ընդունի յեսոյ շքանշանները և Գերպ. Գուզեան ի վեր կը հանէ իր կողմանէ ևս անոր բարեմասնութիւնները և ըրած բարիքները կարօտելոց, կրթական Հաստատութեանց և Եկեղեցւոյ։ Հուսկ կը շնորհէ անոր՝ Քահանայապետին կողմանէ օրհնութիւն։ Վսեմ. Ազգետը շնորհակալութիւն յայտնելով կը խնդրէ որ թարգման ըլլայ Ն. Սրբութեան մօտ իր սրտիական զգացմանց։

Հանդէսը կ'աւարտի փառաւոր ճաշով մը ի յարգանս Ս. Պապին և Գերպ. Գուզեանի։

Խմբագրութիւնս մինչ իր ջերմագին խնդակցութիւնները կը յայտնէ վերոյիշեալ Վսեմ. Հրամանատար Ազգետներուն՝ կը մաղթէ որ իրենց արժանաւոր հետեւորդներ ունենան մեր ազգին մէջ։

ԽՄԲԳ.

ՄԱՅՐ ԴԻՒԱՆ

ՄԽԻԹԱՐԵԱՆՑ ՎԵՆԵՏԿՈՅ.—Ի Ս. ՂԱԶԱՐ

(Շար. տես Բազմ. 1925, էջ 254)

ՃԻԵ.

Մարտիրոսագրութեան մը մանրամասն պատմութիւնը կը դնէ մեր առջև Հ. Միքայէլ վարդապետ. այդ շահեկան տեղեկութիւնը այնպէս կը թուի մեզ՝ որ պակաս մը պիտի լեցնէ Հայ վկայաբանութեան մէջ։

Գերյարգելոյ Արբաց Հօրդ մերոյ, տեառն տեառն Մխիթարայ
Աստուածաբանութեան Վարդապետի

... Եկեսցուք յայժմ առ նորագոյն ինչ, զի լուաք թէ սակաւ ինչ խումբ պարսկական եկեալ ի սեբաստիա, իշնանեալ ոչ ումեք վնասեն, և զոր ինչ առնուն հատուցանեն, զամենս փուռս հացագործաց ինքեանց սեփականեալ, և զամենս հասարակ քաղաքացւոց թողեալ. ասած լինին թէ մերոյ թագաւորին դէմ ելեալ, որ աստի խմբով սոցին գնալոց է. նաեւ լուաք թէ թահմազն զպասրա, զնինվէ, զքէրքիւտ սեփականեալ է, է և ի ներքոյ տիզրանակերտի։ Նաեւ իբրու 20 օր է, որ ասա Եղեքտասան ամաց պատանի

digitised by A.R.A.R.@